

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաբարակացիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւններէ համար վճարում են  
Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏ

«ՄԵԼԿ» լրագրին կարելի է գրվել կէս տարով, վճարելով 6 ռուբլ: Օտարաբարակացիք պէտք է դիմեն ուղղակի խմբագրութեանը, հետեւեալ հասցեով. ТИФЛИСЬ ВЪ РЕДАКЦІЮ «Мелк».

Մի և նոյն ժամանակ խնդրում ենք այն մեր բաժանորդներին, որոնց վրա դեռ մնացել են ապառիկներ, ուղարկել մեզ շուտով իրանց վրա մնացած պարտքը:

Հասցեն փոխելու համար հարկաւոր է հաղորդել խմբագրութեանը հին և նոր հասցեն ճշգրտութեամբ և ուղարկել երկու հատ 7 կոպեկանոց փոստային մարկա:

Յօդուածները, որոնք մեծ գրուածներ չեն, յետ չեն ուղարկվում:

Թղթակցութիւնները պէտք է գրվեն մաքուր և որոշ կերպով:

## ԲՈՂԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեանից: Նամակ Ղզարից: Նամակ Մեծ-Ղարաբլայից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Աւստրո-Ունգարիա: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 12-ին

«Մշակին» հաղորդված այն լուրը թէ Թէյլորաւոցի 15 առն դադարում են դէպի Ղրիմ, առ այժմ չէ ստուգվում. այդ մասին յետոյ մի մանրամասն տեղեկութիւն կը տաւանք:—Երեանից դէպի հիւսիս-արեւելեան կողմի գիւղերին մեծ վնաս է տուել ամիսն սկզբներում եկած կարկուտը: Ասում են որ Սուրմալուի կողմերում էլ է վնասել կարկուտը: Ասում են որ Ալաբանի Սիւնազիւղ ասված գիւղում սաստիկ մորեկն է երեւացել: Ընդհանրապէս Երեանի նահանգում այս տարվայ հունձը խիտ չափաւոր է, ցորենի թանգանները նշաններ են երևում:

Մի գարշելի սովորութիւն էլ մտել է գիւղացոց մէջ, որ նոյնպէս թանգութեան նպաստում է, այն է՝ դէզեր կրակելը: Ով որ իրանից դօրեղին յայտնաբերէ չէ կարողանում պատժել կամ պատժել տալ՝ զարդուով հրեւում է նորա խոտի, գարու և ցորենի դէզերը: Այսօր վաղարշապատի տանուտորոջ, Գեղամանցի դէզերը այրվեցան և քիչ էր մնում որ կրակն անցնէ հասարակութեան դէզերին: Եւ Թէ անցեալ տարի պ. նահանգապետի կարգադրութեամբ Երեանի թեմի գիւղերում տեղական ամբարներ հիմնվեցան, բայց այժմ ամեն տեղերից լրվում է, որ ամբարների ցորենները փչացել են, ոչիլ են ընկել: Հաւանական է այս, փորձով էլ ստուգված է արդէն, որ մինչև ամբարը չը լինի քարովի, սալալատակ և օդախաղաց, մի տարող աւել ցորենն չէ պահում. այլ փոտով կամ ոչիլ է ընկնում ցորենը, երբ պահվում է հորերի կամ անապատայտակ, ցիւաչն և անօդանցիկ չենքերում:

Ասցի որ ցորենի թանգանալու նշաններ են երևում, բայց զուցէ և նիւալ լինի իմ ենթադրութիւնը, որովհետև մօտ օրերումս դէպի հիւսիս-ային կովկաս տեղափոխվեցան նահանգիս զօրքերից մի քանի հեծկազոր և հետեւի գնդեր, որոց փոխարէնը տակաւին զարու չէ:

Վաճառականները լաց են լինում թէ բոլորովին առևտուր չը կայ. կան այնպիսիները, որոնք առած գնիցն էլ պակասով են վաճառում, որպէս զի ձեռքները փող ընկնի և գոնէ ձեռք հա-

մար՝ կարողանան գնալ Ռուսաստան և դորանով փողը ինչ վերականգնել իրանց վարկը: Առհասարակ վերջին պատերազմից յետոյ առևտուրը կանգնած է. բայց անցեալ ու այս տարվայ ընթացքում գրեթէ դադարած է: Չարմանալին այն է որ հէնց այդ առևտրի ընկած միջոցում, այսինքն՝ անցեալ ու այս տարվայ ընթացքում, Երեանում մի այնպիսի եռանդ է զարթել աներ ու խանութներ շինելու համար, որի նմանը երբեք չէ եղած: Այս երկու տարվայ ընթացքում Երեանում 300,000 ռուբլուց աւելի ծախսվել է նոր շինութիւնների վրա: Գուցէ այս է պատճառը, որ այժմ 20—25%—ով փող չէ ճարվում քաղաքում: Թէ և հեռուհեռու, բնակարանների և խանութների թիւը չտատանում է, բայց և այնպէս տարեկան վարձը չէ պակասում. պատերազմից մինչև օրս գրեթէ նոյն գները շարունակվում են: Խանութների վարձի թանգութիւնը մի կողմից, վաճառականութեան իրաւունքի հարկերի սաստկութիւնը միւս կողմից և վերջապէս, առևտրի անկումն էլ երբեք կողմից վաճառական դասին յուսահատութեան մէջ են ձգել և եթէ այսպէս շարունակվի, երկու տարվայ ընթացքում հարկաւոր մարդիկ կը մնանկանան:

Միակ օգտակալ առևտուր մնացործների և հացագործների ձեռքումն է. այդ երկու գործովն էլ բացառապէս թուրքերն են պարագում, որոց կամայականութեան առջև չափազանց անզօր է մեր ք. վարչութիւնը: Արհեստաւորների մէջ յատկապէս են ընթանում այժմ ատաղձագործի, հիւսնի, դարբնի, որմնաղբի, քարհատի ու աղիւսագործի դրոշմերը:

Արհեստաւորների մէջ ամենախեղճ դրութեան մէջ են մաշկակարները, կոշիկակարները, դերձակները, ժամագործները, կղզակագործները, զինագործները, համառագործները և շատ մանր արհեստաւորներ: Կոշիկակարների մէջ մնակ պ. Գ. Բաղրամյանն է, որ իր հմուտ վարպետութեան շնորհիւ առ այժմ ապահով դիրք է ստացել:—Չը նայելով, որ Երեանի հոտած ջրի և օդի չնորհիւ հիւանդների և մեռնողների թիւը օրըստօրէ աճում է, այնու ամենայնիւ բժիշկներն էլ շատ չեն զոհ իրանց նիւթական դրութիւնից. ամենից շատ ընդունված բժշկները հաւատարմութեամբ են որ տարեկան հազիւ թէ 800—1000 ռուբլի ստանան իրանց այցելութիւններից: Եթէ մի շահաւէտ պարագայում կայ, այդ էլ փաստաբանութիւնն է, որը գտնվում է էապէս երեք մարդու ձեռքում և դոցանից իւրաքանչիւրը, միջին թուով, ստանում է տարեկան 4—5,000 ռուբլի: Մանր աղվուկատներ էլ կան, որոնց բանը խիստ բուրդ է այժմ:—Ամենից ապահով դրութիւնը խոհարարների և սպասաւորների դրութիւնն է: Գոքա ստանում են 10—15 ռուբլի ամսական. ունեն ձրի բնակարան իրանց տէրերի մօտ և կերակրվում են նրանց հաշուով բացի իրանից՝ անհնարին է որ իրանց ռոճիկ չարի էլ չը գողցան և Երեանի ծառաներից մեծ մասը փառակի գիւղիցն են, որ Նախիջևանի գաւառումն է:—Իսկ ամենից անապահով դրութիւնը մեր աղքատիկ դպրոցի ուսուցիչներին է. դրանց մէջ ամենից շատ ռոճիկ ստացողը տեսուչն է և ռուս լեզուի ուսուցիչը. դրանց ռոճիկը մի մի 1000 ռ. է տարեկան. իսկ միւս ուսուցիչները՝ շաքարթական 24—28 դասի համար ստանում են 300—900 ռուբլի:

Բայց այդ էլ մշտական ու յարատւ չէ. որովհետև դպրոցների արդիւնները հեռագնում նուազում են փոխանակ անհու: Պրօգրիմագիտը՝ վերափոխվելով զինմաղիմի, և սորա համար նախապատրաստող մասնաւոր դպրոցներ բացվելով, մի և նոյն ժամանակ արքունի ուսուցչական դպրոց հիմնվելով, աղքատիկ դպրոցների աշակերտաց թիւը պակասեց, 300-ից իջնելով մօտ 200-ի մի և նոյն ժամանակ նորից եկողների թիւն էլ պակասեց. սորա հետ պակասեց և թոշակաւորումը: Արդէն երկու տարի է որ ներկայ հոգաբարձութիւնը իր նախորդի օրով գոյացած դրամագլխիցն է մատակարարում. զպրնոցի ծախսը և 10—11,000 ռուբլ:

դրամագլխից, մնացել է մի 3—4000 ռուբլի, այդ էլ ծախսվելու վրա է:

Արդէն դժուարանում է հոգաբարձութիւնը վերջապէս ամսապլխին ուսուցչաց ռոճիկը: Ներկայ հոգաբարձութիւնը ոչ թէ չը կարողացաւ նոր արդիւններ գտնել տղայոց դպրոցների համար, այլ և դպրանոցին յատկացրած արդիւններն էլ չը կարողացաւ ապահովել: Գալոցի հաստատուն աղբիւրներից մէկն էլ մոմալաճառութեան արդիւններից է, որը՝ տարեկան 1800 ռուբլիով տուած է մի այնպիսի աղիկար անձի որ ոչ ինքն է կարողանում շահվել և ոչ էլ դպրանոցին հասանելի չէ գումարն է վճարում ժամանակին: Չորս տարի է որ հոգաբարձութիւնը իշխանութիւնը կարողացել է որ քաղաքիս եկեղեցիների դրամագլխիները ի յայտ ածվեն և հոգաբարձութեան գիտութեանն ու երեցփոխների ձեռամբ տրուին շահով և շահը դաւնայ յօգուտ դպրոցաց. բայց այս կարողութեան օրով չի բախանալ: Եթէ նախկին ու ներկայ հոգաբարձութեանը, որ ժողովրդի մէջ յարգանք վայելող մարդիկ էին և չը կարողացան այդ արդիւնքը ստանալ մեր երեցփոխներից, այդ մեզ իրաւունք է տալիս կարծելու որ եկող հոգաբարձութեան ևս մեծ գոհաւորութիւն են պատճառելու մեր երեցփոխները:

Այնու ամենայնիւ մեր յոյսը մեծ է ժողովրդի հասկացող դասի վրա և կարծում ենք որ եթէ հոգաբարձութիւնը դիմէր ժողովրդի հասկացող ժառանգ և օգնութիւն խնդրէր, կը ստանար այդ օգնութիւնը դպրոցների նիւթական վիճակը բարելոքելու նկատմամբ:—Ինչ դրութեան որ տղայոց դպրոցներն են, գրեթէ աւելի վատ դրութեան մէջ են Գայանեան և Սահակյանիս օր. դպրոցներն են: Առաջինը միանգամայն դրամագլխի չունի, նորքնտրի հոգաբարձութեան գանձապահը ստացաւ իր նախորդից ընդամենը 46 ռուբլու արժեքով մի մուրհակ, որին 46 կոպեկ չէի տալ: Սահակյանիս դպրոցն էլ թէ և 2,300 ռուբլի յանձնեց ներկայ հոգաբարձութեան, բայց այդ հոգաբարձութիւնն էլ սկսեց դրամագլխին ձեռք տալ:

Թեմական դպրանոցի հոգաբարձութեան ժամանակն արդէն լրացած է անցեալ մայիսին, գուցէ մինչև հոկտեմբեր նոր ընտրութիւն լինի, և մենք երեք նորքնտրի հոգաբարձութիւն կունենանք. ցանկալի կը լինէր որ դրանք մի քանի անգամ միասին խորհուրդ կազմէին և ժողովրդի ներկայացուցիչներին էլ հրաւիրելով, պարզ ու ազդու կերպով քաջատրէին երկսեռ դպրոցների վիճակը և ընդհանուր ուժով աշխատէին միջոցների գտնել դպրոցների ապագան ապահովելու համար: Եթէ ազդու միջոցներ չը գործ դրվին, մի երկու տարուց յետոյ կը փակվին մեր երկսեռ դպրոցները:

Յանկալի է որ այս տողերին ուշադիր լինէր մեր ծայրագոյն հ. իշխանութիւնն ևս, որին յանձնված է աղքատի մանկական կրթութեան հսկողութիւնը: Միմյանի ձեռնարանի համար հոգան ու ժողովարարութիւն անելը դեռ ևս բաւական չէ. ձեռնարանի ապագան ապահովելու համար, պէտք է աղքատի ծխական, հոգեւոր և թեմական դպրոցները բարեկարգել այժմէն իսկ:

Նորայր

## ՆԱՄԱԿ ՂԶԻՄԻՑ

Յուլիսի 1-ին

Ղզարը կարծես թէ մօտեցել է իր վերջին ճգնաժամին և այդ իմ ասածին իբրև փաստ կարող եմ առաջ բերել այս տարվայ միջնաշրջանը, որ մօտաւորապէս ամենքին էլ ծանօթ է:

Ան երկու ամիս կը լինի, որ Թերեքը քանդել է թուրք և մեծամեծ շէնքեր է տալիս, բայց մեր քաղաքացիք, որ Ղզարը հայարնակ հարուստ քաղաքներից մէկն են համարում Ռուսաստանում, դրամական միջոցների աղքատեան պատճառով, չեն կարողանում վերանորոգել թուրք և այսպի-

սով աղատել քաղաքը ջրհեղեղից: Այս լուսկիս էլ ջուրը առանց ընդդիմադրութեան վաղում է պատուածքից և երկու հարկերից աւելի այգիներ բոլորովին ջրի տակ են, այգիներն աւտում, այն, առանց որի ղզարցին սովածահ կարող է լինել: Երբ բարձրանում են քաղաքիս Ռուսաւորայ եկեղեցու զանգակատունը, ինչ տխուր տեսարան է ներկայանում քա առաջ. դու առաջին անգամից քեզ երեակայում ես կանգնած անսահման ուղեւանութիւնում, որի տաճարները գնալով՝ աներևութաւնում են կապուտակ երկնակամարի անսահման տարածութեան մէջ և տեղ տեղ միայն երևում են և կէտեր, որոնց եթէ հեռադիտակով նայելու լինես, կը տեսնես որ դրանք ոչ այլ ինչ են, և եթէ ոչ պտղատու ծառերի ծայրերը, որոնք կղզու կերպարանք են ստացել: Այդ տխուր տեսարանը, զգացող մարդու համար այնպիսի ազդող բնաւորութիւն ունի, որ մի անգամ եթէ աչքը բաց ես անում նայելու, միւս անգամ ակամայից փակում ես, մանաւանդ երբ մտածում ես թէ քանի քանի դառն քրտանց կաթիլներ դրովն են արեգակից սկսեցած այնպիսի կողմու դեմքի վրայից, այգուց մի շոր հացի դրամ աշխատելու պատրուակով, քանի անգամ նա իր վիզը ծռած մի ու հառաչանքներ հանելով՝ աղաներից տոկոսով փող է վեր աւել այգու համար, իսկ այդ այգին, խղճուկի միակ յոյսը, կեանքը, ծածկված է ջրի վերմակով:

Եթէ քննական աչքով նայելու լինեք այս բանի վրա, կը տեսնեք որ այսօրս շարքը, արտասուք ու լացը յառաջացել է ղզարցուց անհագնութիւնից, ծուրութիւնից, մանաւանդ աղաների, որովհետև հասարակ ժողովուրդը մեր քաղաքում շատ քիչ ձայն ունի: Շատ դարմանալի բան է, ինչու թուրքերը այդպէս առանց հսկողութեան, առանց վերանորոգման ընկած են, մինչդեռ քաղաքը ամենայն տարի տառնուհինգ հազար (15,000 ռ.) ռուբլ փող է դնում այդ նպատակի համար, ինչու քաղաքացիք հաշիւ չեն պահանջում ամեն տարի թուրքերի վերակացուից, որպէս զի քաղաքի կազմին, արդեօք այդ դրամները տնօրէնվում են իրանց նպատակին, թէ վերակացուի գրպանը ու այգիներն են զարդարում: Եւ երբեք, ինչու վերակացութիւնը յանձնում են այնպիսի անձանց, որոնք երեք, չորս այգիներ ունեն կամ թէ չէ քաղաքային վարչութեան մէջ անդամներ են և որոնք իրանց ինքեքը հազիւ կառավարում են, ուր մնաց թուրքերը, մանաւանդ որ վերակացուները հաց ուտելուց աւելի ուրիշ ոչինչ բան չը գիտեն: Ուրեմն եթէ քաղաքացոյց, աղաների անհոգութեան, ծուրութեան չը վերաբերենք, ապա ուժ վրա մեզ դնեք, Թերեքի թէ յորդ անձրեններ, եթէ ղզարցիների հարցման, նրանք ասում են՝ ոչ սա ես մեղաւոր, ոչ նա, Աստուած բարեկացի ա մեր մեղքերի համար: Սկիզբները ջրի քանդած տեղը շատ փոքր տարածութիւն է եղել, ինչպէս ասում են մօտ երկու զաղաչափ, այդ ժամանակ պատուվածին մօտազայ ջրաղացանները թուրքերի վերակացուից 10 ռուբլ են պահանջել փակելու համար, բայց նա զանցառութեան տալով՝ կարծես թէ խաղում է ամբողջ քաղաքի ճակատագրի հետ, 2 ռ. 50 կօպ. է առաջարկել, իսկ երբ պատուվածի տեղը մեծացել է, կրկին նոյն մարդիկ դիմել են վերակացուին և խնդրել են 25 ռուբլ, բայց նորա շնորհ ցանկութեամբ փողը պիտի մսխվի, կրկին ուշադրութիւն չէ դարձրել, իսկ յետոյ երբ քանդվածը հասել է սաժէնների, 100 ռուբլ են պահանջել, մի և նոյն ժամանակ յայտնելով այն չարքը, որ բացառւում է քաղաքացիներին, բայց պ. վերակացուն դարձեալ ղզացել է առաջ և այնպիսով բանը այն ուղղութիւնն է բռնել, որ այսօր ջրի քանդած տեղը մօտաւորապէս 20 սաժէնի է հասնում և որի առաջը առ այժմ անկարելի է աւելն, մինչդեռ ջուրը ջրվժի նման բաւականին ընդարձակ լայնութեամբ ահագին բարձրութիւնից ընկնում է ցած, մանաւանդ որ ինժեներները նաղայ-

Աւստրիական պետութեան ազգութիւն-  
ների մէջ մինչև այժմ համաձայնութիւն  
չը կար, գրում է «ГОЛОСЪ»: Այդ բազ-  
մաթիւրու և բազմաճեղ ազգաբնակչութիւն  
ունեցող պետութեան ժողովրդների թշնա-  
մութիւնը մինչև այժմ չէ դադարել և  
թուլացնում էր նրա քաղաքական ոյժը և  
միջազգային նշանակութիւնը: Վերջին ժա-  
մանակներում աւստրիահայաստակ սլավեան  
ժողովուրդները աւելի լաւ դրութեան մէջ  
են քան թէ երեք տարի սթանից առաջ:  
Իրա փոխարէն անբաւական են գերմանա-  
ցիները, որոնք իրանց համարում են պե-  
տութեան տիրապետող տարր, և այդ  
պատճառով լեջնամութեամբ վերաբերվում  
են այն բոլոր զիջումներին, որոնց կառա-  
վարութիւնը անում էր և անում է չեխե-  
րին, լեհներին և ուրիշ սլավեաններին:  
Կոմս Տաաֆելի հաշտական քաղաքակա-  
նութեան շնորհիւ աւստրիական ռայխսա-  
տի մէջ սլավեանները աւտոնոմիական տի-  
րապետող եւսակառութեան օրինաւոր տարր

են կազմում, ունենալով իր դեմ կենտրոնական կամ դերմանական—սահմանադրական կուսակցութիւնը, որ անուանվում է նոյնպէս և ազատամիտ: Բայց պարլամենտական տիրապետող աւտոնոմիական այդ կուսակցութիւնը կազմված չէ միայն ազգութեան գաղափարի պաշտպաններից: Նա լրացրած է ամեն տեսակ պահպանողականներից, աւատականներից և կղերականներից, որոնց բացակայութեան դէպքում աւտոնոմիական կուսակցութիւնը աւտորիական բայնսրատի մէջ ձայների բազմութիւն չէր ունենայ և ստիպված կը լինէր յաղթվել կենտրոնականներին:

Քանի որ պայմանները այսպէս են, աւտորիական պետութեան արեւմտեան մասի քաղաքական դրութիւնը բաւական անբնական է: Պերմանական կենտրոնական կուսակցութեան անգամներ թուում նրա հիմնելու օրից միշտ եղել են այնպիսի մարդիկ, որոնք շատ դժգոհութեամբ նշանակում էին իրանց կուսակցութեան շահերը: Մի և նոյն ժամանակ աւտոնոմիական կուսակցութեան շարքում էլ եղել են սահմանադրական կարգերի և ազատամիտ հիմնարկութիւնների կողմնակից բազմաթիւ անձինք, բայց իրանց կուսակցութեան գերակշռող դիրքը պարլամենտի մէջ պահպանելու համար նրանք ստիպված են եղել ձայն տալ աւտոնոմիականների և կղերականների հետ:

Քաղաքական այդ անբնական դրութիւնը առիթ տուեց գերմանական ազատամիտ կուսակցութեան մի քանի անդամներին մի առանձին ժողովուրդ ա կ ա ն կուսակցութիւն կազմել, որի նպատակն է՝ նպաստել աւտորիական պետական կենտրոնի զարգացմանը, բաւականութիւն տալով սլավոնական ժողովուրդների ազգային օրինաւոր պահանջներին այն չափերով, որքան այդ պահանջները ընդդէմ չեն լինի պետական շահերին, միայնակ պետութեան ազատամիտ բոլոր ոյժերը և նրանց հետ միասին գործել յօգուտ ընդհանուր հայրենիքի: Այդ կուսակցութեան կազմվելը, որի հիմնողը գոյտօր Ֆիշօֆն էր, համակրութեամբ ընդունվեցաւ աւտոնոմիական կուսակցութիւնից, մի և նոյն ժամանակ սաստիկ զայրացրեց գերմանական սահմանադրական կուսակցութեանը: Այդ զայրոյթը մասնաւորապէս յայտնվեցաւ ժողովուրդական կուսակցութեան ժողովի ժամանակ դոկտօր Նեվալիի նախագահութեամբ Վիէնայի մէջ:

Գերմանական ժողովուրդական կուսակցութեան ժողովը յուլիսի 4-ին աւտորիական մայրաքաղաքի մէջ բաւական նշանաւոր դէպք է, եթէ ի բաց առնենք այն անկարգութիւնները, որ նիստի վերջին գործեցին կենտրոնականները: Ժողովին մասնակցում էին լայնարատի պատգամաւորները, Վիէնայի քաղաքային վարչութեան բազմաթիւ ներկայացուցիչները, պրօֆէսորները, փաստաբանները և Վիէնայի քաղաքի ընտրուները: Ժողովի նկարագիրը կազմելու համար ներկայացան տեղական և արտասահմանի մամուլի մօտ վաթսուներեկայացուցիչներ: Ժողովի ղեկաւոր մասը կազմում էր ծերունի դոկտօր Ֆիշօֆի ծառը, որի ընթերցանութիւնը, այդ կուսակցութեան յարգելի կազմողի մի քանի խօսքերից յետոյ, որոնցով նա մասնացրեց եղաւ իր ծերութեան և տկարութեան վրա, յանձնվեցաւ դոկտօր Չիլդերին:

Ֆիշօֆի ծառը, որ ժողովը լսեց մեծ

ուշադրութեամբ և որին մեծ համակրութիւն ցոյց տուեց, լինէր ոչ թէ միայն առողջ և խելացի մարդկով աւտորիական պետութեան պէտքերի մասին, այլ և ուշադրութեան արժանի է իբրեւ քաղաքական ամենաազնիւ և մարդասէր ուղղութեան օրինակ: Հրաւիրելով իր ունեւորներին թողնել կենտրոնական կուսակցութեան մէջ արմատացած նախապաշարմունքները և ղիմել առողջ դատողութեամբ, կարգաւորված ծառի հեղինակը ամենից առաջ ցոյց տուեց, որ Աւտորիական անկարող է կառավարվել իբրեւ ազգային պետութիւն, որ նրա մէջ պետութիւնը և ազգութիւնը մի և նոյնը չեն, որ ընդհակառակը նրա մէջ կան մի քանի ազգութիւններ, որոնցից ոչ մէկը մեծամասնութիւն չէ կազմում: Այդպիսի պետութեան մէջ մի որ և է ազգութեան արտոնութիւն ունենալը անտեղի է: Այդ արտոնութիւնը սարսափելի մարտունակ է յարուցանում և սպառնում է նոյն իսկ պետութեան հիմունքներին: Աւտորիական ազգասէրի կարծիքով, գերմանական տարրը Աւտորիայի մէջ կարող է միշտ առաջնակարգ դեր խաղալ, բայց ոչ թէ արտոնութիւնների, այլ իր կուլտուրական նշանակութեան և իր ներկայացուցիչների քաղաքական մեծ ընդունակութիւնների շնորհիւ: Այժմեան կենտրոնական կուսակցութիւնը չէ հասկանում, որ ոչ թէ միայն արդարութիւնը պահանջում է չը սահմանափակել ազգային լեզուների գործածութիւնը ուսումնարանի և պետական ծառայութեան մէջ, քանի որ դրան չեն հակառակում կրթողական կամ պետական պահանջները, այլ և որ նոյնը պահանջում են և աւտորիական պետութեան շահերը և մինչև անգամ Արեւմտեան Եւրոպայի շահերը, որի համար մեծ նշանակութիւն ունի, որ իրանց օրինաւոր ազգային պահանջները մէջ սահմանափակված սլավոնները չընկնեն համայն-սլավոնութեան դիրքը: Գերմանական կուսակցութիւնը, ընդդիմանալով սլավոնների հաւասար իրաւունք տալուն, պատճառ է բերում, Ֆիշօֆի կարծիքով, այն մանական տարրերը հեռու են ազատութիւնից, որ նրանց համար ազգութիւնը ամեն բան է կազմում, իսկ ազատութիւնը ոչինչ: Ահա ինչի համար այդ միտքը ծիծաղելի է:

Ազատութեան հետ, ասված է ծառի մէջ, ժողովուրդին տրվում է իրաւունքների կատարելութիւն, սեփականութեան կատարելութիւն, որ ոչ թէ միայն իդէալական այլ և իդէալական արժէք ունի: Ո՞ր անհատը կամ ո՞ր ժողովուրդը այնքան յիմար կը լինի, որ մերժէ այն թանգազին սեփականութիւնը, որ նրան առաջարկում է և որի ստանալու համար պէտք է միայն ձեռք մեկնել: Պէտք է ձգնարիտը խօսելը, մեր ազգութիւնները արհամարհում են միայն այն ազատութիւնը, որ այլ կերպ չէ կարելի ստանալ, եթէ ոչ ազգութեան գնով:

Կենտրոնականների կարծիքները մէկը միւսից յետոյ հեղեղով, դոկտօր Ֆիշօֆի հանում է այն եղբայրացութեան, որ աւտորիական ազատամտութեան աջողութեան համար անհրաժեշտ է համաձայնութիւն կայացնել Աւտորիայի միւս ազգութիւնների ազատամտ ներկայացուցիչների հետ: Միայն այդ ձանադարձով կարելի է ապահովել երկրի առաջադիմութիւնը և պետութեան զարգացումը:

Այդ ծառը ժողովին չափազանց ոգևորեց: Եթէ ի նկատի առնվի, որ այդ ոգևորութիւնը յայտնվեցաւ Վիէնայի բնիկ ազգա-

բնակութեան մէջ և զայրացրեց միայն կենտրոնական կուսակցութեան մի քանի խուճեկներին, ուրեմն Վիէնայի յուլիսի 4-ի ժողովը կարելի է նշանաւոր անցք համարել Աւտորիայի հասարակական կենտրոնի մէջ: Այնպիսի մեծ և փառաւոր ապագայ ունի, որին երբեք չեն կարող երազել ազգայնութեան ճշնման և բռնանալու սկզբունքների վրա յենվող կուսակցութիւնները:

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 8 յուլիսի 1882

Հայ հասարակութիւնն որ տակաւին այսչափ չէր զգացած ազգային անիշխանութեան հետեւողներն որչափ կը զգայ այս օրերս, վերջապէս այժմ համոզուած կերեւի որ երեսփոխանական ժողովի յօռի կազմութիւնն է այս աղետալի կացութեան միակ պատճառ: Ժողովուրդն ամեն ջանք կընէ ուրեմն որ այդ ժողովն լուծուելով նոր ընտրութիւններ կատարեն տարբեր մի եղանակաւ, և մտադիր է այս անգամ ընտրել այնպիսի անձինք որոնք անցեալը երաշխաւորութիւն լինի, որք բաւականապէս ազատ ըլլան ազգին շահերը իրենց մասնաւոր շահերէն միշտ բարձր դասելու համար:

Երեսփոխանական ժողովն որ 140 անդամներէ պէտք է բաղկանայ՝ հազիւ հարիւր հոգի ունի այժմ: Պակասած 40-ի տեղ վարչութիւնը փոյթ չընէր բնաւ նորեր ընտրել տալու, վասն զի նա այժմեան ժողովի մէջ հազիւ կարողացած է խորխուր և չինծու մեծամասնութիւն մը գոյացնել իրեն նպաստաւոր: Եթէ նոր ընտրութիւններ ըլլան ի հարկէ այդ մեծամասնութիւնը պիտի ոչնչանայ, լաւ է ուրեմն իրեն համար այս պակաս թիւով ժողովը:

Ինչ դասակարգի կը պատկանին և ինչ արժողութեան տէր մարդիկ են այդ հարիւր երեսփոխաններն: Անոնցմէ 20-ը եկեղեցականներ են որք, բայց մի քանի բացառութիւններ, իրենց թիւներն, իրենց ծախսերն անգամ կատարելու անկարող և ամենքն ալ ապուրտ չունեցող անձինք են: 10-ի չափը դատարաններ են, որոնք ներթափանցելի են ի նկատի առնելով ամեն կողմէ ունեցած տեսակ տեսակ անհաճութիւններն կը մեկնուի: 10-ի չափը ազգային լրագրաց խմբագրութիւններ են, որոնք ինչ աստիճան անկախ և ազատ ըլլան իրենց թերթերու մէջ կարելի է տեսնել—բացառութիւններու վրայ չէ մեր խօսքը: Կան նաև ազգային ժողովի մէջ 10-ի չափ բովանդակ և փաստաբաններ, որք միւսնեւրուն նաև բաղադատման անկախ մասը կարող են համարուիլ: Չի մոռանա՞ր նաև էֆէնդիներու խումբը որոնք մասին քանիցս խօսած ենք արդէն: Միացեալներու մէկ մասը կազմուած է փողատերերի և վաճառականների, և միւս մասն ալ անոնց հաճելի ըլլալու պէտք ունեցող անձինքներէ:

Անոցս մի աշխատութիւն է ընել մի առ մի այդ ամեն անձանց մտաւորական զարգացման աստիճանը, բաւական է յիշատակել որ 100 երեսփոխանի մէջ՝ համալսարանական ուսումն արած 10 հատ հազիւ կայ, որոնց 5-ը բժիշկ: Իսկ մնացեալներուն մէջ կան այնպիսիներ որք ոչ միայն հայերէն չեն գիտեր, այլ և չեն կարող իրենց ստորագրութիւնը դնել առանց տառախալի:

Բայց երեսփոխանութիւնը այսքան խայտառակ մի պաշտօն ընողն ղեկաւորապէս այն շահախնդրական ոգին է որ շատեալ միայն իր տիրապետէ: Կան այնպիսի անձինք այդ ժողովի մէջ որք գրեթէ սահմանադրութիւնը հաստատուած օրէնքի վեր յայդդած են միշտ ինքզինքնին ընտրել տալու, ոմանք զաւառներու մէջ ստացած կողմ և խաբէական վարկովն, ոմանք ալ մայրաքաղաքի մի աննշան թաղի 9 թուէ ստանալով միայն ի հարկէ այդպիսիներն միշտ օգուտ մը կը սպասեն ազգային գործերէն, տեսակ մը աղբիւրութիւն մը կունենան թէ պարտիաբարձար մէջ, թէ առաջնորդաց վրայ և թէ զարդանքներու կամ ուրիշ ազգային հաստատութեանց յարկին ներքև և լաւ կամ վատ կապուած ազգին քանակէն: Երեսփոխանք այժմ որ ըստ սահմանադրութեան տրամադրութեանց, վարչութիւն, առաջնորդութիւն, վստահ մատակարարութիւն, ազգային դատաւարակութիւն ամենք ալ այդ իշխանութիւնէն ծագումն կառնեն, թէ պարտաբարձար չափունակ անոր հետ հարկաւորուած

է կենցաղավարել և կը հասկանա՞ց չուտով թէ ինչպէս ազգն այս քայքայման վիճակին մէջ է այժմ, և մասնաւորապէս պիտի դարմանար թէ ինչպէս աւելի վաղ չէք հասած այս վատթար վիճակին:

Ժողովուրդն լաւ հասկացած է ուրեմն իրաց այս վիճակն և ամեն թաղ յատուկ բողոքադրեր կը պատրաստուին Ազգային ժողովի լուծումը պահանջելու համար: Այս միջոցն եթէ յայտնի լաւ ապա թէ ոչ կը տեսնենք:

Ժողովուրդն այս խլրտման մեծ դարկ տուաւ մի խոհմ և լուրջ երիտասարդ, Պ. Ս. Սարաճ, որու «Իմ մտածմունք» վերնադրով շարք մը յօդուածներն որ կը գրէ «Հայրենիք» լրագրի մէջ ամենուն ուշադրութիւնը կը գրաւեն միշտ: Պ. Սարաճ որ Սախոյ-ձօրէն (Ի Բաղէշ) երեսփոխան ընտրուած էր վերջի օրերս՝ մի պատճառաբանեալ հրաժարական յուղարկեց ընդհանուր ժողովը նախագահին, յորում բացարձակ կը յայտարարէր թէ ինքն երեսփոխան ըլլալու համար պէտք եղած հանգամանքներն չունի: Այդ հանգամանքներն են, կրտսէ Պ. Սարաճ, անկախ դիրք, արժանիք և սովորական կարողութիւն: Այս վերջի երկու պայմաններուն իր մէջ բացակայ գտնելն պարզ մի համեստութիւն է միայն Պ. Սարաճի կողմէն, բայց անկախութեան պայմանին դալով մեծ դաս մըն է որ կուտայ նա այն տեղ բազմող շատերուն: Հրաժարագիրը մի և նոյն ժամանակ ցոյց կուտայ թէ այս աստիճան ուսմկավարական դրութիւնն որքան վնասաբեր եղած է մեր ազգին, թէ ինչպէս «ունայն և ամուլ վէճերով, զձեռն անձնականութիւններով, միւս դիմաւ ջրող ուղղումներով և երեսփոխանական ժողովն տարբեր վաստներ է» և կառավարիչ որ այսուհետեւ ընտրութեան և ընտրողութեան վերաբերութեամբ մեր սահմանադրութեան տրամադրած սահմանաւ սահմանը փոքր ինչ սեղմնէ և չափաւորեն: «Պէտք է պահանջել, կրտսէ, որ ընտրողը գտնէ տուն մը ունեցած ըլլան և փոխանակ 75 դրուշ տուրք վճարելու» դրէ և կարգաւ դիտողները քուէարկութեան մասնակցին և այլն: Պ. Ս. Սարաճ կը նախադաշակ իրաւամբ որ եթէ այսուհետեւ ընտրուած երեսփոխաններն ալ չապիկ փոխելու պէս կարծիք պիտի փոխեն, վասն զի այժմեան դրութեամբ որ և է հաստատուած կարծիք ունենալու անկարողներն պիտի ընտրուին միշտ, այն ժամանակ արժանաւորադոյնը հետզհետէ ևս պիտի քաշուին ազգային գործերէ (և արդէն քաշուած ալ են) և երեսփոխանութիւնը պիտի բուրովին կորսնցունէ իրեն անհրաժեշտ եղած յարգելու ու պատկաւը:

Սակայն Պ. Սարաճ տակաւին իր վստահութիւնը և համարուած բողոքովն չի վերցուցած կերեկի երեսփոխանական ժողովի այժմեան անհաւանելու վրայն, երբ իր հրաժարագրին վերջը, և ապա «Հայրենիք» մէջ կը յորդորէ դանդաղ, նոյն հայրենասիրութեանը կը դիմէ, որ իւր տուած օրինակին հետեւին, երբ կը կարծէ որ այդ ժողովին մէջ իւր նման անհաւ, համեստ և անձուրաց անձինք կը գտնուին բաւական թիւով, որք ինքզինքնուն վրայ անդադառնալով պիտի տեսնեն թէ յիշաւ ոչ անկախ դիրք ունին և ոչ ալ այդ պահանջն համար պահանջուած արժանիքն: Մեր այդչափն ալ չենք յուսար այդ մարդերէն: Անոնցմէ յետին անպիտանը այնպէս միտքը դրած է թէ իրմէ աւելի անկախ, խելացի, հետադեմ և գիտուն անձ ոչ եկած է դեռ: Հայոց մէջ և ոչ ալ գալիք ունի: Միաժամութիւն է ուրեմն, պատիւ ընել է անոնց յուսով, որ այդ պարտիւներն, այդ էֆէնդիներն, խմբովին և ինքնաբերաբար հրաժարելով՝ երեսփոխանական ժողովն ալ լուծուալ պիտի համարուի և նոր ընտրութիւններու պիտի ձեռնարկէ ժողովուրդը: Այդ ժողովը չի լուծուած՝ դեռ մեծ գոտութիւններու պատճառ պիտի ըլլայ: Ինչ որ ալ ըլլայ բոլոր այս խլրտմանց վերջաւորութիւնը, Պ. Ս. Սարաճ գովելի օրինակ մը և մեծ դաս մը տուած պիտի համարուի թէ ընտրողաց և թէ ընտրեալներուն: Զարմանալի չի որ մի լրագրի ինքուրթ թղթակիցը տակաւին չի հայտնից նորա դէմ և ոտտիկանութեան չի մատնեց դայն, որպէս զի զգացնէ թէ ինչ է ձգնարութիւնը խօսել իր խնկարկած պատկառելի ժողովուն դէմ:

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՌԵՐ

«Միջազգային հեռագրական ընկերութեան» Լօնդօնից հեռագրութեամբ են յուլիսի 9-ին: Լօրդ

